ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ «Զապել Եսայանի կյանքը և ստեղծագործությունը» («Ավերակներուն մեջ») գիրքը

Հետազոտող ուսուցիչ՝ Գոհար Ղազարյան
ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ
Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3
ԳԼՈՒԽ 1. Զապել Եսայանի կյանքը և ստեղծագործությունը……6
ԳԼՈՒԽ 2. Զապել Եսայանի գրական, հասարական և քաղաքական գործունեությունը…..10
ԳԼՈՒԽ 3. Մահվան առեղծվածը……12
ԳԼՈՒԽ 4. Մեծերը՝ իր մասին, ինքը՝ մեծերի մասին……14
ԳԼՈՒԽ 5. Զապել Եսայանի նամակները……20
ԳԼՈՒԽ 6. Բեմադրել հատվածներ «Ավերակներու մեջ» վեպից……21
ԳԼՈՒԽ 7. Մեջբերումներ Զապել Եսայանի գրառումներից……24
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……25
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……27

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտական աշխատանքի նպատակն է ներկայացնել արևմտահայ գրող Զապել Եսայանի կյանքն ու ստեղծագործությունը և նրա «Ավերակներուն մեջ» գրքում կատարված դեպքերը համեմատել 2020 թվականին սկսված 44-օրյա պատերազմի բերած ավերածությունների, մարդկային կորստի հետ, այսինքն՝ անցյալը ներկայացնել ներկայի մեջ ու կապել իրար:

19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ ժողովրդի կյանքում կատարված սպանդն ու տեղահանությունը կրկնվում են նաև մեր ժամանակներում: «Հայոց պատմություն» դասագրքի արյունոտ էջերը շարունակվում են լրացվել ու գրվել առավել մուգ և խտացված կարմիրով: Թվում է, թե հայ դպրոցականը ամեն ինչ գիտի 1895-1896, 1908-1909 և 1915 թվականներին օսմանյան կայսրության կողմից կատարված հայաջինջ քաղաքականության, նրա «արյունոտ հնձի» մասին, սակայն կան պատմության մութ էջերը բացահայտող գրքեր, որոնք դուրս են մնացել դպրոցական ծրագրերից: Որքան էլ թերթենք մեր հոգու պատմության դասագիրքը, միևնույն է, կգտնենք նոր, թաքնված էջեր, որոնց խորքից լսվում են մորթված ու աքսորի փշոտ ճանապարհին դեռ տնքացող մանուկների հոգետանջ ճիչեր: Կան դրանց մասին գրված բազմաթիվ գրքեր, որոնք սպասում են իրենց ընթերցողին: Ցավոք, մեր ժամանակներում գնալով կարճանում է դպրոցականին գրքին միացնող թելը՝ կապված ժամանակի բերած նոր տեխնիկայի՝ համակարգիչ, հեռախոս, նորամուծությունների հետ: Թեև դրանք տալիս են հնարավորություն՝ բանալու պատմության դարս-դարս ծալքերը և պեղելու մեզ անհրաժեշտ նյութերը, սակայն հետաքրքրությունն անցյալի հանդեպ թուլանում է, որովհետև մեծ տերությունների օրակարգից է դուրս մղվում Հայոց եղեռնի ճանաչման հարցը: Դրա սառեցումը հանգեցրեց նաև նրան, որ այսօր էլ անտարբերության պատ է կանգնեցված մեր օրերի նոր ցեղասպանության առաջ: Դարանցիկ իրադարձությունների ահասարսուռ պատկերները՝ մարդկային ցեղի ոչնչացում, ավերածություն, գերեվարված ու տեղահանված ժողովուրդ, սգավոր մայրերի ու որբացած մանուկների ճիչեր նորից լսվեցին 20-րդ դարի վերջին և դրանք ավելի սարսափելի դարձան 21-րդ դարում: Վերջին ամենասարսափելի 44-օրյան

ավելի մրմռացրեց ու խորացրեց հայի դարավոր վերքը, իսկ 2022 թվականի սեպտեմբերի 13-ին սկսված նոր պատերազմը եռապատկեց ցավը մեր ժողովրդի և թարմացրեց Եռաբլուրն ու նրա դրոշների ծփանքը: Հային բնաջնջելու ծրագիրը նոր հնչեղություն ստացավ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սկսված և 44 օր տևած պատերազմի ժամանակ, երբ հայ ժողովրդին նորից ստիպեցին հագնել հուսահատության, կորստի ու ցավի թաց շապիկ, և զինակոչիկի համար երդման սրբավայր դարձած «Եռաբլուր»-ը վերածվեց համաշխարհային Պեր- Լաշեզի: Երեսուն տարի պարտության բեռի տակ կքած Ադրբեջանը որոշեց վրեժ լուծել՝ Հադրութին, Շուշիին, հայաբնակ տարածքներին նորեն տեր լինելու համար: Թշնամու արարքին օգնության ձեռք մեկնեցին հզորները, իսկ հայի անզոր ձեռքը մնաց օդում կախված ու քանդակվեց շիրմաքարին: 2020 և 2022 թվականները վերածվեց 1915 թվականիի, իսկ Արցած աշխարհն ու Հայաստանը՝ նոր Արևմտյան Հայաստան, Շուշի բերդաքաղաքը՝ Կիլիկիա: Հայ ազգը կրկին քայլեց Գողգոթայի արյունոտ ճանապարհով, դարձյալ եղեռնվեց՝ դառնալով նավթաբերան ադրբեջանցու զոհը: Հին ու նոր ժամանակների իրադարձությունները հանդիպեցին իրար նոր մարտավարությամբ ու դերակատարումներով: Անցյալի դեպքերը ներկա դարձնելով և ներկայի մեջ անցյալի արմատները վեր հանելով՝ տեսնում ենք նույն արյունոտ ձեռքերը հայելու զույգ կողմերում: Ծրագրային թեմաներից զատ, հիմնական դասաժամերից դուրս փորձեցինք «Դասղեկի ժամ»-ի ընթացքում ներկայացնել դպրոցականի՝ ապագա հայ զինվորի հայրենասիրական ոգին բարձր պահելու, փորձություններից նորից հառնելու և վերածնվելու գաղափարով դաստիարակելու գործունեությունը: Եվ աշակերտի համար անհայտ հեղինակի կյանքի պատմությունը ու նրա գիրքը եղան քննարկման նյութ՝ դրվելով մեր օրերի պատերազմների կողքին: Ընտրվեց արևմտահայ կին գրող Զապել Եսայանի «Աւերակներու մեջ» վեպը, որի գործողություններն ու բովանդակությունը, թեման և հուզող հարցերը կարծես նույնն են, ինչ վերջին տարիների իրադարձությունների շղթան: Աշակերտական խորհրդի կողմից և դասղեկի ուղղորդմամբ ու օգնությամբ մշակվեց ծրագիր՝ այն իրականացնելու համար:

ա. Նախ հանձնարարվեց կարդալ գիրքը՝ որպես արտադասարանական ընթերցանություն նշված ժամկետում:

բ. Աշակերտները բաժանվեցին խմբերի, որպեսզի կարդալու ընթացքում կատարեն իրենց տրված հանձնարարությունները՝ կապված հերոսների, տեղանունների, գործողությունների ժամանակաշրջանի և այլնի հետ:

գ. Ընթերցման ավարտից հետո կազմվեց այն ներկայացնելու սցենար՝ իր բոլոր կետերով:

դ. Կատարվեց դերաբաշխում և այն ներկայացվեց հանդիսատեսին բեմականացված տարբերակով՝ զուգահեռ ցուցադրելով տեսասահիկ ու կինոժապավեններ:

ե. Ուսուցիչներից կազմված հանձնախումբը ամփոփեց աշխատանքը և տվեց գնահատական:

Այս ստեղծագործությունը, դեռևս «չպեղված» մի գիրք է՝ շատերին անծանոթ, ականատեսի ու ցավն ապրածի, տեսածի ու լսածի, նաև դեպքերից մազապուրծ եղածի «երկնած» արժեքավոր դիպաշարն՝ է նվիրված Կիլիկիայում կատարված ամենառողբերգական իրադարձություններին: Եվ հեղինակը մեկն է այն հազարավոր հայերից, որոնց հոգին լիքն է դառնությամբ՝ ընդդեմ քար աշխարհի, ի հեճուկս անմարդկային մարդկության: Գիրքը և ընդհանրապես հեղինակի արտահայտած գաղափարներն ունեն ժամանակակից հնչեղություն: Եվ մենք փորձել ենք այս ամենը ներկայացնել ոչ թե գրականության, այլ դասեկի ժամին՝ ներկայացնելով արձակ խոսքի, երգի ու բեմականացման միջոցով՝ ավելի հետաքրքիր ու տպավորիչ դարձնելու նպատակով: Բոլոր նախապատրաստական աշխատանքները կատարվել են «Դասղեկի ժամ»-երին դասարանում, իսկ միջոցառումը՝ դպրոցի դահլիճում: Կիրառվել են «Խմբային աշխատանք», «Հեղինակի աթոռ» և «Համագործակցություն» մեթոդները:

Փորձել ենք 19-րդ և 20-րդ դարերի գործողությունները համեմատել 21-րդ դարի պատերազմների հետ ու գտնել նմանություններ և՛ ժամանակի, և՛ հերոսների, և՛ պետությունների վարած քաղաքանությունների միջև: Գրքի և մեր օրերի իրադարձությունների դեպքերն իրար զուգակցելով ներկայացվել է թատերականացված միջոցառում՝ դպրոցականին տանելով պատմության խորքերը և կանգնեցնելով մեր ժամանակների կշռաքարին:

ԳԼՈՒԽ 1. ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՄԵԹՈԴ «ՀԵՂԻՆԱԿԻ ԱԹՈՌ» ԵՎ «ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ»

Բեմի վրա՝ մեջտեղում դրված աթոռին, նստած է հեղինակը՝ Զապել Եսայանը: Աջ ձեռքում պահել է թաշկինակը, ձախ ձեռքին՝ «Աւերակներուն մէջ» գիրքը: Հագին իր սպիտակ հագուստն է, ոտքերին սև կրունկով կոշիկներ են: Գլխին սպիտակ լայնեզր գլխարկ է, աչքերն արնալեցուն են ու թաց, շրթունքները դողում են:Կողքին դրված սեղանին գրքեր են, թանաքաման՝ փետրավոր գրիչով, լուսանկարներ, նամակներ, պայուսակ և հովհար:Տեսասահիկով ցուցադրվում է հեղինակի հետևյալ միտքը.

ԻՆՉ ԱՐԵԼ ԵՄ, ԱՐԵԼ ԵՄ ՀՕԳՈՒՏ ՍԻՐԵԼԻ ԱԶԳԻՍ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

Բեմի տարբեր մասերում կանգնած կամ նստած են աշակերտներ՝ձեռքերին պաստառներ, որոնց վրա գրված են ավերված քաղաքների անունները, ավերակներ ներկայացնող տեսարաններ են: Գետնին պառկած են վիրավոր, պատառոտված շորերով անտուն որբեր, և նրանց կողքին վառվում են մոմեր: Երբ մահանում է նրանցից որևէ մեկը, հանգչում է նրա մոմը, ու շրջակայքում լսվում են ողբագին ձայներ: Պատին՝ ժապավենի

վրա, ցուցադրվում են լուսանկարներ, հնչում է «Կիլիկիա» երգի երաժշտությունը (խոսք՝ Ն. Ռուսինյանի, եր.՝ Գ. Երանյանի), և հեղինակը ոտքի է կանգնում, ձեռքերը տարածում աջ ու ձախ, հետո գլուխն առնում է ձեռքերի մեջ ու գլխիկոր շրջում է բեմի բոլոր հատվածներում: Այդ ընթացքում աշակերտները երգում են երգը: Ստեղծվում է սահմռկեցուցիչ տեսարան: Վերջին մահացողի հետ հանգչում է և վերջին մոմը: Մի պահ բեմը մթնում է, և հեղինակը գոռալով ասում է.

-Զարթնի՛ր, մեր ցավից խլացա՛ծ աշխարհ. հանգավ հայի վերջին մոմը: Ընկավ Կիլիկիան, գոնե փրկենք մնացյալ Հայաստանը: Հնչում է «Ադանայի ողբը» երգի մեղեդին, և դասարանի 18 աշակերտները մեկ-մեկ մոտենում են հեղինակին, կանգնում նրա աջ ու ձախ կողմերում, ասում իրենց խոսքը և նստում նրա առաջ: Այդ պահին ամեն մեկը դառնում է հեղինակ և պատմում առաջին դեմքով:

1-ին աշ. - Ես Զապել Մկրտչի Եսայանն եմ, 20-րդ դարի հինգ հեղափոխական կանանցից մեկը, ով, դուրս գալով Կիլիկիո ավերակների միջից, ամենուր հնչեցնում է անոր վերածննդի զանգը:

2-րդ --- Ծնվել եմ 1878 թվականի փետրվարի 4-ին Կ. Պոլսի Սկյուտար թաղամասին մեջ՝ Սիլիհտարին պարտեզներ հատվածում:

3-րդ --- Կրթությունս ստացած եմ Պոլսո մեջ, հետո՝ Ֆրանսիայում՝ Սորբոնի համալսարանում: Մասնակցած եմ Կոլեջ դը Ֆրանսի գրականության ու ֆիլիսոփայության դասընթացներին:

4-րդ --- Աշխատակցել եմ Գվիդոն Լուսինյանի ֆրանսերեն-հայերեն բառարանին՝ իբրև սրբագրիչ և խմբագրիչներից մեկը: Հենց այդ ժամանակամիջոցին ծանոթացա Արշակ Չոպանյանի, Երվանդ Օտյանի, Էդգար Շահինի և Սիամանթոյի հետ:

5-րդ ---Առաջին արձակ բանաստեղծությունը տպագրած եմ 1895 թվականին Արշակ Չոպանյանի «Ծաղիկ» հանդեսում: Այնուհետև տարբեր վայրում ու հանդեսներում հրատարակել են իմ նովելները, պատմվածքները, գրականանգիտական հոդվածները, թարգմանությունները և նամակները:

6-րդ --- Երբ ինձ կըսեն բանաստեղծ, կըպատասխանիմ՝ արձակագիր եմ, կըսին արձակագիր, այն ատեն բանաստեղծ եմ:

7-րդ ---Իմ անունս հայտնի դարձուցին «Սկյուտարի վերջալույսներ», «Կեղծ հանճարներ», «Հլուները և ըմբոստները», «Շնորհքով մարդիկ» վիպակները, որոնք աչքի են

ընկնում հոգեբանական վերլուծությունների խորությամբ, իրականության ռեալիստական պատկերմամբ:

8-րդ --- 1909 թվականին Ադանայի ջարդերի կապակցությամբ ստեղծված պատվիրակության կազմում մեկնել եմ Կիլիկիա և «Ազատամարտ» թերթում տպագրել հոդվածներ այդ աղետի մասին:

9-րդ --- Կիլիկիայի հայության ողբերգությունը գրած եմ «Ավերակներու մեջ» գրքում ու մի քանի պատմվածքներում:

10-րդ --- 1915-ին խույս տալով ձերբակալությունեն՝ ապաստանած եմ Բուլղարիա, հետո՝ Թիֆլիս, ու հանդիպած եմ Հովհաննես Թումանյանին:

11-րդ--- 1918 թվականին Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում կազմակերպած եմ հայ տարագիրների և որբերի հավաքման ու տեղավորման գործը:
Արտասանում են «Տասնհինգ թիվ» և «Ո՞վ էր մեղավոր» բանաստեղծությունները (տե՛ս «Հավելված»-ում):

12-րդ --- Այդ շրջանում էլ գրած եմ «Վերջին բաժակը», «Հոգիս աքսորյալ» վիպակները, որոնցում արտահայտած եմ իմ բողոքը ազգային մեծ ողբերգության առիթով:

13-րդ --- 1926 թվականին այցելած եմ Խորհրդային Հայաստան և ստացած տպավորություններս արտահայտած եմ «Պրոմեթէոս ազատագրված» գրքում:
Իսկ 1933-ին վերջնականապես տեղափոխված ու հաստատված եմ Հայաստանին մեջ, ուր ինձ իսկական հայ կզգայի:

14-րդ --- Աշխատեցի Երևանի պետական համալսարանում՝ արտասահմանյան գրականության ամբիոնում՝ դասավանդելով եվրոպական ու ֆրանսիական գրականություն: Հասա դոկտորպրոֆեսորի աստիճանի: Ինձ կանվանեին նաև գրականագետ ու հրապարակախոս:

15-րդ --- Ազգությունս՝ հայ, լեզուս՝ հայերեն, ֆրանսերեն: Ես՝ Զապել Եսայանս, Հայաստանի Հանրապետության քաղաքացի եմ:

16-րդ --- 1900 թվականին ամուսնացել եմ նկարիչ Տիգրան Եսայանի հետ: Ունեմ երկու զավակ՝ աղջիկս՝ Սոֆին, և տղաս՝ Հրանտը:

17-րդ --- Մայր հայրենիքում իմ կյանքը համընկավ ստալինյան բռնությունների ժամանակաշրջանին հետ, երբ ես կպաշտպանեի Եղիշե Չարենցին, Ակսել Բակունցին:

Ստոր մատնությունների ալիքը ինձ էլ հասավ ու 1937-ին թակեց իմ դուռս, ու մինչև 1943 թվականը անցկացրի Բաքվի բանտին մեջ և….

18-րդ ----Ինչ կուզեք ինձ անվանեք՝ հայ գրող, թարգմանիչ, բանաստեղծ: Ատիկա չեն իմ կոչումներս: Ես հայ եմ ու հպարտ եմ դրանով ու ամենուր պիտի հնչեցնեմ իմ խոսքս, որը եղել է իմ կյանքիս հպատակը.

«ԻՆՉ ԱՐԵԼ ԵՄ, ԱՐԵԼ ԵՄ ՀՕԳՈՒՏ ՍԻՐԵԼԻ ԱԶԳԻՍ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻՍ»:

ԳԼՈՒԽ 2. ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Աշակերտները ոտքի կանգնելով ասում են ներքոնշյալ հեղինակային խոսքերը՝ հեռանալով Զապել Եսայանից և մոտենալով հանդիսատեսին:

Ստեղծվում է այն տպավորությունը, որ նրանք դարերի խորքից նրա խոսքը բերում, մոտեցնում են մեզ և փռում նոր ժամանակի մեջ:

-Հեղինակի ուսուցիչները եղան Պետրոս Դուրյանն ու Ռաֆֆին, Սրբուհի Տյուսաբն ու Բալզակը, Գրիգոր Զոհրապն ու Ֆլոբերը, Թումանյանը, Իսահակյանն ու Մոպասանը, Միսաք Մեծարենցը, Վարուժանն ու Սիամանթոն:

- 1934 թվականին Զապել Եսայանն ընտրվում է ԽՍՀՄ գրողների միության անդամ և նույն թվականին որպես պատգամավոր մասնակցում է խորհրդային գրողների միության առաջին համագումարին, որտեղ հիմնական զեկուցողը Մաքսիմ Գորկին էր: Գորկուց հետո նա ֆրանսերենով արտասանած իր ելույթում ասաց. «Գրողը չի կարող չեզոք դիրք գրավել կամ ապահովագրել իրեն հեռվից տեսնելու, նոր համոզվելու» կամ «նախ՝ ուրիշները, հետո՝ միայն ես» կարգախոսներով:
- Նույն թվականին Չարենցի, Դեմիրճյանի, Միքայել Մանվելյանի հետ ընտրվում է Երևանի քաղաքային խորհրդի անդամ:

Այնուհետև էկրանին ընդգծվում են 1937 և 1943 թվականները՝ մեկը ձերբակալման, մյուսը մահվան:

Դրանց փոխարինում է այն քարտեղը, որը վերնագրված էր. «ԱՅՆ ՏԵՂԵՐԸ, ՈՒՐ ՈՏՔ ԴՐԱԾ ԵՄ»՝ մեկառմեկ նշելով վայրն ու տարեթիվը, սկսած ծնունդից մինչև մահ:

Այնուհետև բերվում են հետաքրքիր փաստեր հեղինակը կյանքից. 1909 թվականի ապրիլին երիտթուրքերն Ադանայում կազմակերպում են հայերի կոտորած, որին զոհ է գնում շուրջ 30.000 մարդ: Հայ մտավորականներից, գրողներից ու գործիչներից կազմվում են պատվիրակություններ, որոնք մեկնում են աղետի վայրերը: Նրանց թվում էր նաև Զապել Եսայանը, ով շուրջ երեք ամիս լինում էամենուր՝ Ադանա, Մերսին, Սիս, Օսմանիե և այլ բնակավայրերում, լսում կոտորածների ականատես մարդկանց, գրում հոդվածներ, գեղարվեստական մի շարք գործեր:

Զապել Եսայանը 1910 թվականին մեկնել է Փարիզ։ Հոր ծանր հիվանդության պատճառով 1911 թվականին վերադարձել է ծննդավայր, այնտեղ մնացել մինչև 1914 թվականին մայիսը։ Այնուհետև կրկին մեկնել է Փարիզ, սակայն Առաջին համաշ-խարհային պատերազմի սկզբին վերադարձել է Կ. Պոլիս։

1915 թվականի ապրիլի 24-ի գիշերն աքսորի ենթակա հայ մտավորականներից միակ կինը, ում անունը գրված է եղել նախապես կազմված ցուցակում, Զապել Եսայանն է։ Դիպվածով մազապուրծ Հայոց ցեղասպանությունից՝ շուրջ երեք ամիս փախստականի կյանք է վարել, ապա մեկնել է Բուլղարիա, Ռումինիա, իսկ 1915 թվականի վերջին՝ Կովկաս։

1915 թվականին Թիֆլիսում Հովհաննես Թումանյանի հետ ծրագրեր էր մշակում որբերին տեղավորելու, նրանց խնամելու և կրթություն տալու վերաբերյալ։
Փարիզում ապրած տարիներին նա եղել է Հայաստանի օգնության կոմիտեի Փարիզի մասնաճյուղի անդամ ու աշխատակցել այնտեղ լույս տեսնող «Երևան» թերթին՝ առաջ քաշելով սև բռունցքներում խեղդվող հայի ազատագրության և իրավունքների հարցը։ Հայաստանի Առաջին Հանրապետության տարիների եղել է խորհրդական և ֆրանսերենի թարգմանիչ, մեր պատվիրակության կազմում մասնակցել է Փարիզի հաշտության կոնֆերանսի աշխատանքներին։

Գրել է «Վերջին բաժակը» (1916), «Հոգիս աքսորյալ» (1919) վիպակները՝ բողոքի ձայն բարձրացնելով քաղաքական և սոցիալական անարդարությունների դեմ, մտորելով հասարակության մեջ կանանց տեղի և դերի մասին։ «Մարդիկ՝ այր թէ կին՝ ընդհանրապէս այն չեն ներկայանար, ինչ որ են իրապէս. Ու այն կեղծ հանդերձանքը, որ կը ստանան յաճախ, անգիտակցութեամբ է, բայց այդ այդպէս է. Դեր մը կ՚ընտրեն կեանքի մէջ ու այդ դերը կը կատարեն. Դերը կ՚ընտրեն երբեմն ինքն իրենց, որովհետեւ ատիկա գեղեցիկ կը գտնեն, բայց եւ յաճախ կ՚ընտրեն այն դերը, զոր ուրիշները գեղեցիկ կը համարեն» «Վերջին բաժակը (գրված է 1916-ին , հրապարակված՝ 1924-ին)։

1921-ին ամուսնու հիվանդության պատճառով նա վերադառնում է Փարիզ, նույն թվականի օգոստոսին ամուսինը մահանում է։

ԳԼՈՒԽ 3. ՄԱՀՎԱՆ ԱՌԵՂԾՎԱԾԸ

Հայ մեծանուն գրող, հասարակական-քաղաքական գործիչ, ֆրանսերենից կատարած հրաշալի թարգմանությունների հեղինակ, հրապարակախոս, թարգմանիչ Զապել Եսայանի (Հովհաննիսյան) մահվան ճշգրիտ տարեթվի և հանգամանքների հետ կապված առայսօր տարբեր վարկածներ կան, որոնցից մի քանիսի վերաբերյալ մեր գրականագետներից ոմանք գրեթե նույն մոտեցումն ունեն:

Գրողի թոռան՝ Ալեքսանդր Եսայանի հետ ունեցած հարցազրույցի ընթացքում նա ասաց, որ տատիկի նամակներից մեկը թվագրված է եղել 1943-ով: Ըստ Ալ. Եսայանի՝ դա կարող էր թյուրիմացություն կամ սխալմունք լինել: Սակայն կան մարդիկ, ովքեր պնդում են, որ Զապել Եսայանը մինչև կյանքի վերջին օրերը շատ սթափ միտք ու հրաշալի հիշողություն է ունեցել և չէր կարող սխալվել: Ուրեմն՝ 1937 և 1943 թվականներ… Գրողի մահվան տարեթիվ են նշվում նաև 1938-ը, 1939-ը: Ի վերջո, ո՞րն է գրողի տանջալից վախճանի ստույգ տարեթիվը, և ի՞նչ հանգամանքներում է նա մահացել:

Այս կապակցությամբ իր պատմությունն ունի արձակագիր, վաստակաշատ լրագրող Կլարա Թերզյանը: Նա նոր մանրամասներ պատմեց Զապել Եսայանի կյանքից, որոնք ժամանակին հատվածներով գրվել են «Անկախի» էջերում:Կլարա Թերզյան - Զապել Եսայանը մեծ ոգևորություն էր ապրում, խանդավառված էր հայրենիքով. տպավորություններն ամբարում էր, որոնք հետագայում վեպեր էին դառնալու: Նա սիրված էր որպես մարդ, որպես ստեղծագործող, որպես դասախոս: Իսկ այդ տարիներին հասարակության կողմից սիրվածները միշտ շրջապատված էին մարդկանցով, հատկապես՝ երիտասարդությամբ: Եսայանն ամենուրեք էր՝ գրողների միությունում, հա-մալսարանում, վեպեր էր գրում, ելույթներ ունենում, զեկուցումներ կարդում, եռանդուն մասնակցում էր գրական վեճերին, հալածանքներից պաշտպանում տաղանդավոր գրող-ներին:

Ահա նա ինչ է ասել Չարենցի մասին. «Եղիշե Չարենցը մեր ամենամեծ բանաստեղծն է, այդ անուրանալի է բոլորի համար, նրա տաղանդը շոշղոշուն լույսի պես շլացնում է մեզ… Մեզանից շատերի անուններն անհետ կկորչեն, բայց գալիք սերունդները չեն մոռանա Չարենցին: Թերևս մեզանից ոմանց անուններն անցնեն գալիք սերունդներին միայն այն պատճառով, որ Չարենցի արժեքով մեկու մը մասին եղել ենք արդար կամ

անարդար»:Զապել Եսայանը, պաշտոնական մի անձնավորության, որ եկել էր գրողների տուն հերթական միջոցառման՝ հաստատելու, թե իբր Ակսել Բակունցը ժողովրդի թշնամի է, զայրույթով ասում է. «Ես չգիտեմ, թե դուք ով եք կամ ինչ կաշխատեք, բայց իրավունք չունիք Բակունցին վերաբերյալ այդ կերպ արտահայտվելու: Ակսել Բակունցը Մոպասանին քով դրվելիք արվեստագետ մըն է»:Եվ այս բոլորը՝ անհատի պաշտամունքի տարիներին: Զապել Եսայանն էլ արժանացավ Եղ. Չարենցի ու Ակ. Բակունցի ճակատագրին: Սկզբում Երևանի, այնուհետև Բաքվի բանտում նրան խոշտանգելուց հետո աքսորեցին Սիբիր, ու նրա կյանքն ընդհատվեց1943 թվականին, և միչև օրս էլ անհայտ են նրա ողբերգական մահվան հանգամանքները: Ճիշտ է՝ պատմությունն ու տարիները լռեցին, սակայն հզոր ժամանակը 1957 թվականին արդարացրեց նրան՝ ճանաչելով անմեղ: Զապել Եսայան՝ «ազգի թշնամի»-ն դարձավ Զապել Եսայան՝ «ազգի պանծալի դուստր»:

Նա կյանքի նշանաբանն էին դարձրել իր «Բարպա Խաչիկի» վեպի հերոսներից մեկի խոսքերը. «Ինչ արել եմ, արել եմ ՝ հօգուտ սիրելի ազգիս ու հայրենիքիս: Լավ է՝ վերցրե՛ք ինչքան և ինչպես կուզեք, վատի համար ներեցե՛ք»:

ԳԼՈՒԽ 4. ՄԵԾԵՐԸ՝ ԻՐ ՄԱՍԻՆ, ԻՆՔԸ՝ ՄԵԾԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Հայոց մեծագույն գրագիտուհի, ազգային-հասարակական անվանի գործիչ:

2.Ամենազգոն և ամենաբմբոստ դեմք և օրվա հերոսուհի:

Արշակ Չոպանյան

1. «Համալսարանում ուսանելու տարիներին մենք տեսանք ու ճանաչեցինք Զապել Եսայանին: Ընդմիջումներին, եթե պրոֆեսորականի դուռը բաց էր, անցնում էինք և աչք գցում մեր պրոֆեսորներին: Նրանք մեզ համար հեղինակություն էին: Զապել Եսայանը, գահավորակի վրա նստած, ծխում էր: Սա նորություն էր մեզ՝ ուսանողներիս համար: Այն տարիներին սովոր չէին կնոջը ծխելիս տեսնել: Նա նոր մարդ էր Երևանում: Անում էր այն, ինչ սովոր էր անել Ֆարիզում: Գիտեր, որ շատերը խեթ էին նայում իրեն: Հենց նրանց էլ առաջարկում էր իր ծխախոտատուփը»:

Ամերիկյան լրագրերից մեկը գրել է. «Մարդկության պատմության ամենեն խիզախ Կանանցից մեկը հայ գրող, թարգմանիչ, հրապարակախոս Զապել Եսայանն է: Պայքարի մարտիկ, փայլուն կնոջ օրինակ, որն ապրել է այնպիսի ժամանակներում, երբ խելացի ու հաստատակամ լինելը ամենավտանգավոր հատկանիշներից էր»: Հիշում եմ վերջին դասախոսությունը: Ավելի շուտ՝ զրույցը:

- Եկեք ընդմիջում չընենք: Համաձա՞յն եք: Ու եթե թույլ տաք՝ ես կծխեմ: Դեմ չե՞ք: Հրաժեշտի օր է այսօր ինձի համար: Գուցե այլևս չհանդիպենք իրարու: Գուցե դուք ալ ցըրվեք այս մեծ երկրին չորս կողմերը և հանդիպեք շատ ուշ կամ բնավ չհանդիպեք: Ճի՞շտ է: Հանեց ծխախոտատուփը, դրեց կողքի սեղանին, գտավ լուցկին, բայց չծխեց: Ու խոսեց սրտագին մի լեզվով, ինչպես մայրը կխոսի զավակների հետ, նրանցից անջատվելուց առաջ: Խոսեց մեր ապագա զբաղմունքից, խոսեց այն պատասխանատվությունից, որ ունի մանկավարժը սովորող երեխաների նկատմամբ: Խոսեց երկրի ու նրա ապագայի մասին և ներշնչեց մեզ այն միտքը, որ նեղվելիս չնվնվանք, միշտ պայծառ նայենք ապագային, որի համար ապրում ենք և գործում, անկախ նրանից, թե ով մեզանից դրան կհասնի, ով՝ ոչ:

Նրա վերջին խոսքը.

- Եթե հոգեպես նեղվիք՝ հիշեք, որ կրնամ ձեզի նեցուկ ըլլալ: Եթե նյութապես նեղվիք՝

չզլանաք աջակցությանս ապավինել: Այս ասելով, նա մոտեցավ մեր դասընթացի միակ ուսանողուհուն՝ Ալիս Մանուկյանին և համբուրեց:

- Ընդունեք, որ բոլորիդ համբուրեցի: Եվ քայլեց դեպի դուռը՝ ինչպես միշտ հանգիստ ու խաղաղ, բայց հպարտ մի զգացումով: Ռուբեն Զարյանի «Հուշապատում» գրքից

2. «Հայ կանանց համաշխարհային ասոցացիայի» անդամ, խմբագիր Ջուդի Սարյան, ով վերջերս՝ 2016-ին ԱՄՆ-ում լույս տեսած Զապել Եսայանի «Ավերակների մեջ» վավերագրության անգլերեն թարգմանության խմբագիրն է, գրել է.

«Զապել Եսայանը հավատում էր, որ գրականությունը ոչ թե զարդարանք, այլ սոցիալական հավասարության համար պայքարելու միջոց է: Մասնավորապես «Ավերակների մեջ»-ի հիմնական ուղերձը հանուն ճշմարտության եւ մարդու իրավունքների համարձակ գործելն է: Զապել Եսայանը առաջին հայ գրողներից էր,որոնք հատուկ ուշադրություն դարձրեց կոտորածների ժամանակ կանանց չարչարանքներին»:

3. Երևանի պետական պատկերասրահի աշխատակցուհի տիկին Աշխեն Սիմոնյանը, այն դժնդակ տարիներին եղել է Զապել Եսայանի հետ նույն բանտախցում:

- 1937-ին ինձ բանտարկեցին, բերեցին ներկայիս ՊԱԿ-ի շենքը, որ այն ժամանակ ՆԳԺԿ-ինն էր, և ասացին, որ բանտարկված եմ այսինչի ցուցմունքով: Այդ ցուցմունքն իրականությանն ամենևին չէր համապատասխանում: ՆԳԺԿ-ի բանտախցում հանդիպեցի Զապել Եսայանին: Գիտեի, որ անվանի գրող է, հասարակական գործիչ, արտասահմանից եկել է Հայաստան, որ ուժերի ներածին չափով օգտակար լինի իր ժողովրդին: Բանտախցում նա տարիքով բոլորից մեծն էր, մենք նրան հարգալից տիկին Զապել էինք կոչում: Շատ համակրելի ու խելացի կին էր: Շատ էր մտահոգված իր զավակների ճակատագրով, ոչ մի տեղեկություն չուներ նրանցից, թույլ չէին տալիս ո՛չ տեսակցություն, ո՛չ նամակագրություն:Մի անգամ էլ նրան տարան հարցաքննության, բայց վերադարձավ երկու օրից միայն: Տանջել էին, պահանջելով ստորագրել, որ լրտես է: Հերոսաբար դիմացել էր:Մի անգամ էլ եկան ու նրան ասացին. «Ձեզ կանչում են իրերով»: Դա նշանակում էր, որ կա՛մ աքսորում են, կա՛մ ազատում: Նման դեպքերում պայմանավորվում էինք կալանավորի հետ, որ եթե ազատվել է՝ մեզ որևէ բան ուղարկի, ասենք՝ սանր: Դրանից հետո կարող էինք իմանալ, որ ազատ է արձակված: Զապել Եսայանին իրերով տարան, բայց քանի որ պայմանավորված առարկան չստացանք, ենթադրեցինք, որ աքսորել

են:Զբոսանքի գնալիս ես էի տոպրակը հացադուլավորներին գցում: Երբ արդեն ուզում էի իջնել, տեսա տիկին Զապելին՝ աստիճաններով բարձրանալիս: Հերարձակ էր:

- Տիկին Զապել, - հարցրի, - ո՞ւր էիք, ինչպե՞ս հայտնվեցիք:

- Մահվան քավարանեն կուգամ, աղջի՛կս: Մահվան քավարանե՛ն: Զապել Եսայանի ձեռքից բռնելով՝ տարա իմ բանտախուցը, խնդրեցի.

- Տիկին Զապել, արագ պատմեք, թե Ձեզ ի՞նչ է պատահել: Եվ նա պատմեց: Երբ իրեն ասել են՝ եկեք իրերով, տարել են զինտրիբունալ, որ եկել էր Մոսկվայից: Զինտրիբունալը նրան մեղադրել է լրտեսության մեջ, դատապարտել գնդահակարության: Միաժամանակ իրավունք են տալիս Մոսկվա դիմում գրելու, որպեսզի մահվան դատավճիռը փոխարինվի տասը տարվա աքսորով: Եվ նրա դիմումն իսկապես ուղարկում են Մոսկվա և գալիս է դրական պատասխան: Այլևս տիկին Զապելի մասին լուր չունեցա: Մեկ էլ լսեցի, որ աքսորի ճանապարհին մահացել է:

- Ասում են՝ իբր Բաքվում նրան տեսնող է եղել, երբ նավով պետք է փոխադրեին Կրասնովոդսկ, և որ նավի վրա փորհարությամբ է տառապել և նրան Կասպից ծովն են գցել: Կա մահվան մեկ ուրիշ վարկած: Բաքվում պարկի մեջ են մտցրել և գազանաբար ծեծել: Ականջիս հասել է նաև այսպիսի տեղեկություն. բանտում Եսայանը հերոսաբար չի ստորագրել իրեն հարուցած մեղադրանքի տակ: Սակայն այնքան սոված են պահել, որ, ի վերջո, հարկադրված է եղել ստորագրել: Այդ օրը նրան տվել են մի բաժակ կաթ և սպիտակ հաց…

Երևանի պետական պատկերասրահի աշխատակցուհի Աշխեն Սիմոնյան

4. Կլարա Թերզյանի հուշերն ու տեղեկությունները Զապել Եսայանի հետ ունեցած իր շփումների և նրա զավակների հետագա ճակատագրի մասին:

Զապել Եսայանի ընտանիքի ճակատագիրը

Մի անգամ նա ականատես եղավ, թե ինչպես սեղանը դաշնամուր դարձրած՝ նվագում եմ ու երգում: Դեմս Կոմիտասի երգերի նոտաներն էին, որ միշտ հենում էի մի որևէ առարկայի: Եսայանը շոյեց գլուխս ու ասաց. «Ապրի՛ս աղջիկս, ես քեզ անպայման դաշնակ կնվիրեմ: Երբ «Բարպա Խաչիկ» գիրքս տպվի, քեզ անպայման գեղեցիկ դաշնակ կգնեմ»:

Համոզված եմ՝ եթե գիրքն այդ ժամանակ լույս տեսներ, Եսայանն անպայման իր խոստումը կկատարեր:

Մի երեկո Զապել Եսայանը մեզ մոտ էր ամբողջ ընտանիքով: Երկար մնացին և երբ գնացին, տատս նկատեց, որ սեղանին մոռացել են իրենց տան բանալիները: Մինչ մերոնք մտածում էին՝ ինչ անել, աննկատ վերցրի բանալիներն ու դուրս թռա: Ամառային գիշեր էր, վազում եմ մթության մեջ. ահա Աբովյան փողոցը, որ քիչ թե շատ լուսավորված էր… Նրանց հասնում եմ դեղատան մոտ ու տալիս բանալիները: Մինչ նրանք անսպա-սելիությունից չգիտեն՝ ինչ անել, ես արդեն հեռվում եմ: Տանը, իհարկե, ստացա հասանելիք պատիժը, բայց հայրս նաև գովեց համարձակությունս:

1935 թ. հայրս վախճանվեց: Զապել Եսայանը մեր ընտանիքին ավելի մտերմացավ: Նրա որդին՝ Հրանտը, խառնվածքով մորից տարբեր էր, միշտ լռակյաց, գլուխը կախ, բայց շատ բարի ժպիտ ուներ: Նրան բոլորը սիրում էին ու ասում, որ լավ քիմիկոս է: Քույրը նրա հակապատկերն էր՝ մինչև հիմա էլ ականջիս Սոֆիի ծիծաղն է. այնքա՜ն կենսուրախ էր:

- Չգիտեմ, թե գույժն ինչպես հասավ, ինչպես իմացանք, որ Զապել Եսայանը ձերբակալված է: Պետք էր նեցուկ լինել նրա հարազատներին, օգնել, որ ձեռագրերը չոչնչացվեին: Մայրս, վտանգի ենթարկելով իրեն, օգնեց: Սոֆիին, ամուսնուն և երեխային հանեցին Աբովյան փողոցի իրենց բնակարանից և տեղավորեցին ինչ-որ փայտաշեն տնակում:

Սոֆի Եսայանի մոտ հոգեկան խանգարման նշաններ են նկատվում: Սոֆին գնում է Գառնի, աշխատանքի ընդունվում դպրոցում որպես ֆրանսերենի ուսուցչուհի:

1942 թվականի գարնան մի օր հնչում է դռան զանգը: Ներս է մտնում զզզված մազերով, աղքատի հագուստով մի կին: Տատս կարծում է՝ մուրացկան է, ուզում է հաց տալ, իսկ նա վզովն է ընկնում ու հեկեկում: Սոֆի Եսայանն էր: Առանց հուզվելու հնարավոր չէ նկարագրել նրա տեսքը: Հագել էր մոր մահուդե խալաթը, որից ո՛չ գույն էր մնացել, ո՛չ տեսք: Խալաթը հասնում էր մինչև գետին, մեջքին գոտու փոխարեն լվացքի պարան էր կապված, իսկ ոտքերին՝ պատառոտված կոշիկներ: Երբ մի փոքր հանգստացավ, պատմեց, որ աղջիկը՝ Զաբելը, մահացել է: Երեխան կարմրուկով է հիվանդացել, ինքը չի իմացել, լողացրել է, տանտերերն էլ տնից են հանել: Աներևակայելի թշվառություն: Իմացանք նաև, որ Սարիբեկը Սոֆիին գյուղ ուղարկելուց հետո ամուսնացել է: Հետո ռազմաճակատ է մեկնել և այնտեղ զոհվել: Զապել Եսայանի ամբողջ ունեցվածքը, այդ թվում և ամուսնու՝ Տիգրան Եսայանի նկարները, մնացել էին այդ կնոջը:

Սոֆիի հիվանդությունը գլուխ էր բարձրացնում: Նա մե՛կ տանն էր, մե՛կ հոգեբուժարանում: Այն, ինչ Զապել Եսայանը չկարողացավ անել իր դստեր համար, մայրս արեց պատերազմական և հետպատերազմյան ծանր, զրկանքներով ու դառնություններով լի տարիներին: Մորս մահից հետո Սոֆիին նեցուկ եղավ Սերիկ Դավթյանը, որ բանտում Զապել Եսայանի հետ էր եղել: Սոֆին իր կյանքի վերջին երկու տասնամյակում աշխատում էր Գիտությունների ակադեմիայում և ամբողջովին նվիրվեց մոր գրական ժառանգության վերականգնման, գրքերի հրատարակման գործին:

- Զապել Եսայանին ձերբակալելուց հետո Հրանտին ազատեցին աշխատանքից, բայց այն օրը, երբ ուզում էին հանել նաև բնակարանից, Մոսկվայից պաշտոնական գրություն ստացվեց: Հրանտ Եսայանի գյուտն արժանացել էր հեղինակային իրավունքի և թույլ էր տրվում ներդնել արտադրության մեջ: Զապել Եսայանի որդին իրավունք ստացավ աշխատելու գործարանում և ապրելու իր տանը: Հիվանդությունը, մահը չոքել էին Եսայանների դռներին: Մահանում է Հրանտի աղջիկը՝ Սոնան, կինը՝ Բերկրուհին, ավելի ուշ՝ 50-ական թվականների սկզբին, որդին՝ Վահրիկը: Մեծ էՀրանտի ներդրումը քիմիայի զարգացման գործում: Սինթետիկ կաուչուկի կոմբինատը զարգացավ նրա աչքի առջև և նրա անմիջական մասնակցությամբ: Հայրենական մեծ պատերազմի տարիներին Հայաստանում հիմնվեց Գիտությունների ակադեմիան, Հրանտը դարձավ նրա առաջին ասպիրանտներից մեկը:

«Երևանի կենսագրությունը նաև իմ կենսագրությունն է», - հպարտորեն ասում էր Հրանտ Եսայանը:

Կարինե Ավագյան

5. Մեր գրականության մեջ ամենեն կանացի զգայնությունն է անիկա: Քնքշություն, գորով, վայելչություն և ճաշակ: Իր գործին երեք կեդրոններըկազմեցին

Փարիզ-Պոլիս-Հայաստան, որոնց գույները կպահեն բնականություն և տեղական բնորոշ նկարագիր: Նա մեր ժողովրդին ամենեն խորունկ սարսուռները իրարու կմիացնե:

Անիկա խղճմտանք մըն է, սիրտ մըն է, միտք մըն է: Տիկին Եսայանի գործը արևմտահայ գրականության ամենեն ամբողջ հաջողությունն է:

Իր հերթին Զապել Եսայանը գնահատում էր իր գրչակից ընկերների, իրեն ճանաչող մարդկանց:

ա. Ավետիս Ահարոնյանին նա հռչակել էր «Հայ գրականության թուխ Արամազդ»:

բ. 1934 թվականին, խոսելով Ավ. Իսահակյանի մասին, նա հորդորում է. «Դուրսին մեջ ապրողները պիտի անպայման վերադառնան Հայաստան, այստեղ պիտի կերտվի հայ ժողովուրդին գալիքը, ուր կյանքը պիտի եռա, ուր ավերակներ չկան»:

ԳԼՈՒԽ 5. ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Զապել Եսայանի մասին նյութերն ուսումնասիրելիս հանդիպեցինք մի շարք նամակների, որոնք նա ուղարկել էր իր հարազատներին, ընկերներին։ Շատերի համար գուցե հետաքրքիր կլինի տեսնել 100 տարի առաջ ապրող զարգացած հայ կնոջ վերաբերմունքն ու մտահոգությունն իր դստեր ապագայի վերաբերյալ։ Կարծում եմ ցանկացած ծնող կարող է այս գեղեցիկ տողերից քաղել մի շարք մտքեր, որոնք կօգնեն մեծացնել ինքնավստահ, տոկուն, ձգտումով, չընկրկող մարդ։

Սոֆի Եսայանին 1914, մարտի 20, Սկյուտար։

- 1. Շատ սիրելի աղջիկս, դու արդեն փոքրիկ օրիորդ ես հիմա։ Դարձել ես տասնչորս տարեկան, իսկ դա քեզ համար ունի հատուկ նշանակություն, քանի որ այս տարի ավարտելու ես տարրական կրթությունդ։ Սիրելի Սոֆի, շարունակիր սովորել, որ լավ ճանաչես կյանքը։

- 2. Մեր հայրերէն մեզի աւանդուած ժառանգութիւններէն ամէնէն շքեղը, ամենէն իրականը մեր գեղեցիկ, հարուստ եւ մեծավայելուչ <u>լեզուն</u> է, պէտք է պահպանենք յուզումով, հրայրքով եւ խանդաւառութեամբ։ Ես վստահ եմ, որ կը պաշտպանենք[1]։

ԳԼՈՒԽ 6. ԲԵՄԱԴՐԵԼ «ԱՎԵՐԱԿՆԵՐՈՒ ՄԵՋ» ՎԵՊԻ «ՆԵՐՍԸ և ԴՈՒՐՍԸ» ՀԱՏՎԱԾԸ

Հնչում է կոմիտասյան «Դլե՛, յամա՛ն»-ը, թույլ խավարի մեջ երևում է բեմի կահավորումը՝ ավերակներ, գետնին ու պատերի տակ փռված մեռած ու ողջ մարմիններ, հեռվում՝ ծխացող քաղաք ու թուրքերի անզուսպ հռհռոց…

2 աշակերտ, բեմի խորքից արտասանում են հեղինակի «Երգ առ գիշեր» բանաստեղծության 1-ին մասը և առաջ են գալիս:

Զ. Ես. - Կըսեք ավերակնե՞ր: Ավերակներ հոս են: Ավերակներ սրտիս մեջ են:

Հոգևորական- Մեզի կըսեն, թե հոս կին մը կսպասե քահանային: Դու՞ք եք: Հա՞յ եք, թե՞ եվրոպացի: Ուղեկից- Հայ ենք, Պոլիսեն եկած հանձնախմբին անդամ:

Հոգ. - Փառք ձեզի, որ ողջ եք տեղ հասել: Հարկավ բարին եկած եք:

Զ. Ես. - Դու՞ք եք առաջնորդարանին տեղապահը: Կրնա՞նք այս գիշեր հոս կենալ:

Հոգ.- Ավա՜ղ, տեղապահին սպանեցին, կարելի է ըսել՝ մորթազերծ արին գազանները: Ես նրան կփոխարինիմ: Անշուշտ, կարող եք մնալ, եթե չեք վախնար: Ըսեք, խնդրեմ, տիկին, դուք որևէ մեկուն կփնտրե՞ք:

Զ. Ես. - Կփնտրենք ամենքն ալ, եթե, իրավ, կենդանի մնացած են:

Հոգ.- Այս օրերուն Կիլիկիո առաջնորդարանը կհավաքե բոլոր փրկվածները հոս՝ եկեղեցիին մեջ:

Զ. Ես. - Իսկ ու՞ր են առաջնորդապահն ու քահանաները:

Հոգ.- Ավագ քահանան կշրջե ամենուր: Կփորձե դադարեցնել և կանգնեցնել հայերուս կոտորածը Ադանային մեջ:

Զ. Ես. - Շա՞տ են դրանք:

Հոգ.- Տուն չկա կանգուն: Ամենքն ալ մարած են, իսկ կենդանի մնացածները հոս են:

Կին- Աչքերս կուրացան: Քար կտրեր են: Ես ոչ հաց կուզիմ, որ օգնություն: Արցու՛նք տվեք ինձի. Մա՛հ տվեք ինձի:

Զ. Ես. - Ո՞վ ես դու, մամի՛կ, ինչու՞ կողբաս:

Կին - Մատներս չորնան. Սա մատներով ըրի:

Զ. Ես. - Ի՞նչ ըրիր, մամի՛կ: Ու՞մ, ե՞րբ: Ինչպե՞ս:

Կին - Սպանեցի: Զավակիս: Երեկ գիշեր: Սա մատներովս խեղդեցի:

Զ. Ես. - Ամմա՜ն:

Այդ պահին կինն ուշաթափվում է և չի կարողանում շարունակել: Մի տղամարդ՝ վիրավոր, պատառոտված շորերով, գլխից ու կրծքից դեռ ծորացող արյան մեջ, մի կերպ քարշ քալով կոտրված ոտքը, պատմում է եղելությունը: Երեկ գիշեր սկսվեց Ադանային մեջ մեր թաղամասին սպանդը: Թուրքերից հալածված ու կենդանի մնացած 15-20 հոգի թաքնվել էինք այս ավերակին մեջ: Նրանք գոռալով մեզ էին ման գալիս, որ մաքրեն քաղաքը հայերուց: Մենք վախից ձայն չէինք հանում, որ մթության մեջ մեզ չտեսնեն: Երբ թուրքերը կանգնեցին տանիքին ու սկսեցին գոռալ, այս երեխան, որ քնած էր մորն գրկին մեջ, վախից արթնցավ ու սկսեց ճչալ: Քսան զույգ աչքեր կփնտրեին այդ մեկ տարեկան մանկանը, որ ձենը կտրեին: Սարսափելի ոճիրը վճռված էր: Խեղճ մայրը մյուսներուն կյանքը փրկելու համար զույգ բազուկներով կխեղդե կուրծք ուտող իր միակ տղային, ու ձայնը կլռե:

Զ. Ես. – Եվ դա արել է հա՞յ մայրը: Աստո՜ պատիժ….

Կին - Մա՛հ տվեք ինձի, երթամ զավակիս քով:

Զ. Ես. -(Լացակումած): Դժբա՜խտ արարած: Աստծո տված մայրությունը մայրն է սպանում՝ ուրիշներուն կյանքը փրկելու համար:

Զապել Եսայանը կիսախավարի մեջ հերթով մոտենում է բոլորին: Շատերն արդեն մահացած էին, իսկ կենդանի մնացածների միաբերան աղաչում էին.

- Տիկին, մենք էլ ոչինչ ու ոչ ոք չունենք, մեզի մայրություն ըրեք… Ամենուր կոտորած է, մահ է, ամբողջ Կիլիկիան ավերումին մեջ է, ու՞ր երթանք, ըսե՛… Վերացավ Ռուբենյաց տունը մեկ գիշերվան մեջ: Ադանան մոխիր է…

Ողեկից- Հաջորդ օրը, երբ մենք հեռանում էինք Ադանայեն, առաջնորդարանին մեջ կենդանի մնացած միակ կինը մեր հետևից գոռաց.

- Հեռացե՛ք այս ավերակներուն մեջեն: Եթե դուք գրող եք, փրկե՛ք ձեր անձը, որ հետո գրեք այս մեռելներու և անտեր որբերու մասին: Այս զուլումին մասին, որ ոչ մեկ ազգ տեսած չէ: Տառապանքին բաժակը լեցուն է, մտածեք հայու ապագային մասին ու կենդանի մնացածներու մասին…

Մթության մեջ հնչում է «Ադանայի ողբը» երգը (տե՛ս «Հավելված»-ում)

Նույն 2 աշակերտը բեմի 2 կողմերից արտասանում են հեղինակի «Երգ առ գիշեր» բանաստեղծության 2-րդ մասը (կա «Հավելված»-ում):

Հակիրճ ներկայացնում են 44-օրյա պատերազմի ամփոփագիրը՝ արտասանելով

«Ո՞վ պիտ տա պատասխան» և « Աշխարհը նույն աշխարհն է» բանաստեղծություն-ները (տե՛ս «Հավելվածում»-ում):

ԳԼՈՒԽ 7. ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐ ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԻՑ

… Իրեն հարգող կնոջ իդեալը միայն հաճելի լինելու մեջ չէ»… Երևելի տիկնայք

… Կինը աշխարհ չէ եկած մինակ հաճելի ըլլալու համար։ Կինը եկած է իր խելքը, մտային, բարոյական և ֆիզիքական յատկութիւնները զարգացնելու համար։ Ինքզինքնին յարգող բոլոր կիներուն իտէալը միայն հաճելի ըլլալը պէտք չէ ըլլայ, այլ երկրիս վրայ գործօն բարերար տարր մը դառնալը։

… Մենք, ընկերնե՛ր, հազարամյա մշակույթ ունեցող ժողովրդի մը ժառանգորդներն ենք։ Մարդկային քաղաքակրթության պատմության մեջ մեր պատվավոր և ինքնուրույն տեղը ունենք։ Դարերու շարանին մեջ մեր ազգային մշակույթը հաջողեր է, հակառակ դժվարություններին և հաճախ ամենադաժան պայմանների չի խզել այն շղթան, վորուն վերջին ողակը անտեսում ենք։ Մեր մշակութային հարուստ ու բազմակողմանի անցյալը մեծ պարտավորություններ կդնե մեր վրա, բայց մեր ներկայի դրած պարտավորություններն ավելի մեծ են և ավելի ծավալուն, ավելի խոր
և մանավանդ ավելի պատասխանատու։

…Չորս տարեկան էի, երբ կարդալ սորվեցայ։ Մութը իջնալէն յետոյ, հայրս կը դառնար տուն, կը լուացուէր, զգեստները կը փոխէր և սամոյր մուշտակը հագած կը նստէր ցած բազմոցի մը վրայ, որուն առաջ դրուած էր պղնձէ մանգալը։ Կրակարանին մէջ, եռոտանիի վրայ, ջուրը կ’եռար թէյի համար։ Այն ժամանակ թէյի գործածութիւնը տարածուած չէր Պոլսոյ մէջ, բայց հայրս այդ սովորութիւնը բերեր էր Կովկասէն։ Ինքն իր ձեռքովը կըպատրաստէր թէյը, կը լեցնէր բաժակներու մէջ, հարկ եղած բոլոր արարողութիւնները ընելով։ Մինչև թէյի ջուրին եռալը. հայրս կը բանար օրուան թերթը, «Արևելք»ը, և կըկարդար։ Ես կը նստէի գիրկը և հայրս մուշտակի փէշը կը ծածկէր իմ վրաս։ Այդ տաքուկ բոյնին մէջ երանութեան ժամեր կ’անցունէի և աչքերովս կը հետևէի թերթի տառերուն։ («Սիլիհտարի պարտեզները» գործից)

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դաս-միջոցառումից հետո՝ հաջորդ «Դասղեկի ժամ»-ին, կատարված վերլուծում-քննարկումից հետո աշակերտների կատարած եզրակացությունները դարձան ամփոփիչ խոսք և հարատևության անձնագիր տվեցին Զապել Եսայան հեղինակին ու նրա բոլոր ստեղծագործություններին, որովհետև նա հարազատի սրտացավությամբ պատմությունից նրբորեն «սրբում-մաքրում է» հայի հայրենասիրության վրա դրած փոշին ու Ադանայի օրինակով պայքարելու և մարդկակային գենը շարունակելու ոգով ապրելու դասեր է տալիս նոր սերնդին: Մոխրացավ Ադանան, գերվեց Կիլիկիան, բայց հայն ապրեց ու վերընձյուղվեց: Գերվեց Շուշին, ավերվեցին արցախյան շեներն ու կրկին արյունոտվեց Արայի ցախերի երկիրը, բայց պիտի շարունակի ապրել հայը:

Կիլիկիան միայն Կիլիկիա չէր. այն այսօր դարձել է Արցախ ու Սյունիք, որը դեռ փորձում է շնչել հայերեն ու պայքարել կիլիկիացու արյան եռքով: Արցախն Հայաստան աշխարհը ապրում են նույն դառն օրերը, ինչ կատարվեց դարուկես առաջ Արևմտյան Հայաստանում: Սակայն արցախցին չի պատրաստվում ՝ թողնելու իր հողն ու տունը և չի ուզում մտածել իր պատմական հայրենիքն ամբողջովին կորցնելու մասին. նա դեռ տոկում է ու պայքարում:

Ադանայի ավերակների միջով անցած Զապել Եսայան հայ գրողի «Աւերակներուն մէջ» գիրքը դպրոցականին հասանելի գրականություն է պատմական Կիլիկիայի, հիմնականում Ադանայի կոտորածների մասին, որով փորձեցինք համեմատել հայ ազգի երկու տարբեր հատվածներում պայքարի ձևերն ու մարդկանց:Հուսանք, որ մեր վերջին պայքարի արյունոտ էջերը՝ իրենց ողջ ճշմարտությամբ նույնպես կդառնան գեղարվեստական գրականություն և կդրվեն Զապել Եսայան հայ գրողի «Աւերակներուն մեջ» գրքի կողքին՝ որպես գրական նոր հուշարձաններ:

Կիլիկիա և Արցախ, հայաշեն երկու տարածքներ ունեցան նույն ճակատագիրը: Պարզվում է՝ նույն ձեռագրով գրվում են սցենարներ՝ փոխելով գործող անձանց ու վայրերի անվանումները:

Ավագ եղբոր՝ սրբապիղծ Թուրքիայի ձեռագիրը շարունակեց ազգային դեմք և քաղաքակրթության մեջ պատմական արժեք չունեցող Ադրբեջանը, որի սրտին է ծանրացել մեր 5000-ից ավելի հերոսացած զավակների մայրերի անեծքը:Ժամանակը Անդրանիկի, Նժդեհի, Մոնթեի ու Կոմանդուսի և բյուր նահատակների զորավոր ձայնով ի լուր

անարդար աշխարհի Սասունից, Կիլիկիայից,Խուստուփի լեռներից ու Սուրբ Ղազանչեցոց կամարներից կինչեցնի արդարության ձայնը՝ հավերժ մաքառման դարերն իր ուսերին պահած հայի աշխարհասփյուռ զանգը:

Խմբով ասվում են նրա վերջին խոսքերը.

«ՄԻ ՕՐ ԵՍ ԱԼ ԿԱՆՄԱՀԱՆԱՄ»:

Մջոցառման վերջում բոլոր մասնակիցները հերթով արտասանում են «Ինչու՞»բանաստեղծությունը և շարվում բեմի մեջտեղում հպարտորեն կանգնած Զապել Եսայանի կողքին:

Զապել Եսայանն ապրեց ընդամենը 65 տարի: 2018 թվականի մարտի 8-ին Փարիզի Հանրապետության պողոտայի և Տլիմսեն ու Սպինոզա փողոցների հատման կետում գտնվող ճեմուղին անվանակոչվել է Զաբել Եսայանի անունով, իսկ մենք՝ Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի աշակերտներս մեր պատանեկան հոգում կանգնեցնում ենք 20-րդ դարի հեղափոխական հերոսամարտիկ ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԻ կենդանի հուշարձանը՝ որպես մեր ժամանակի նոր հերոսուհի:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1Եսայան Զապել, Ավերակներու մեջ, 1911թ.

2Եսայան Զապել, Սիլիհտարի պարտեզները, 1935թ

3Սևակ Արզումանյան, Զապել Եսայան (կյանքը և գործը), Երևան, 1965թ

4Հայկական հանրագիտարան, հատոր1,

5Ռուբեն Զարյան, Հուշապատում

6Գոհար Ղազարյան, Բանաստեղծություններ